

ԳՐԱԽՈՍՈՒԹ ՅՈՒՆ, ԵՎ, ԲԻՐԱԼԻՈԳՐԱԿՈՒՄ

**Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ***

1940 թ. Արմֆանը ձեռնարկեց հայ ուսուցիչներին-դեմոկրատական մտքի խոշորագույն ներկայացուցիչ Միքայել Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակության գործին և նույն թվականին լույս ընծայեց ժողովածուի III հատորը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեգյանի անվան Գրականության ինստիտուտը Հայրենական պատերազմից հետո շարունակելով Արմֆանի սկսած գործը, 1945 թ. լույս ընծայեց Նալբանդյանի երկերի I, 1947 թ.՝ II, 1949 թ.՝ IV հատորները:

Այսպիսով, Գրականության ինստիտուտի ջանքերով առաջին անգամ հրատարակվեց Մ. Նալբանդյանի թողած մինչև այժմ հայտնի ամբողջ գրական ժառանգությունը:

Նալբանդյանը իր կենդանության օրով առանձին գրքերով ապագրված տեսավ միայն իր «Երկու տող» (1861 թ.) և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» (1862 թ.) աշխատությունները: Նալբանդյանի մահից հետո առաջին անգամ 1903—1906 թթ. Ա. Զամինյանի խմբագրությամբ Ռոստովում լույս է տեսնում հայ մեծ մտածողի երկերի երկ-հատորյակը, որը պարունակում է հեղինակի բանաստեղծությունները, «Մեռելահարցուկ», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», «Երկու տող» աշխատությունները և հրապարակախոսական մի շարք գործերը՝ վերցված «Հյուսիսափայլ»-ից:

Այդ հրատարակությունը, սակայն, ուներ լուրջ թերություններ: Այնտեղ տպագրված երկերը ցարական ցենզուրական խստությունների ենթարկվելով, լույս են տեսել այնպիսի աղճատումներով, որոնք աղավաղում էին հեղինակի ուսուցիչական մտքերը: «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատությունը լույս է տեսել ամենակարևոր հատվածների կրճատումներով:

Նալբանդյանի երկերը սիստեմատիկաբար սկսեցին հրատարակվել միայն սովետական պայմաններում:

Ինչ խոսք, որ լիակատար ժողովածուի հրատարակության ուղղությամբ կատարված է խոշոր աշխատանք: Կադմոգների և խմբագրողների ջանքերով առաջին անգամ Նալբանդյանի գրական ամբողջ ժառանգությունը՝ բանաստեղծություններ, արձակ երկեր, հրապարակախոսական հոդվածներ, նամակներ, սենատական ցուցմունքներ և այլն, ամփոփված են չորս հատորների մեջ և ինչպես մի փառքի կոթող՝ կանգնեցնում են ընթերցողի առջև մեծ ուսուցիչական-դեմոկրատիկ հաղթական ֆիգուրան՝ 19-րդ դարի կեսերի դժան ժամանակաշրջանում:

Գիտական հրատարակությունը պատրաստողները զգալի աշխատանք են կատարել Նալբանդյանի գրական ժառանգությունը բուրժուա-նացիոնալիստական, սպեցիֆիկյան խեղաթուրումներից ազատագրելու ուղղությամբ: Նալբանդյանը այն հայ հեղինակներից է, որոնց ստեղծագործությունները տարիների ընթացքում առավել մեծ չափով աղավաղ-

* Միքայել Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հատոր I, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Հրատարակչություն, Երևան, 1945 թ., հատ. II՝ 1947 թ.: Տեքստը, կոմենտարները և ծանոթությունները՝ Նշան Մուրադյանի: Խմբագիրներ՝ Հովիկ Մելիքյան, Խորեն Սարգսյան, Հարություն Մկրտչյան: Հատոր III, Արմֆանի Հրատարակչություն, 1940 թ. խմբագրությամբ Հովիկ Մելիքյանի, Խորեն Սարգսյանի, Հարություն Մկրտչյանի: Հատոր IV, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Հրատարակչություն, 1949 թ.: Տեքստը և ծանոթագրությունները պատրաստեց Արամ Ինճիկյան: Խմբագրությամբ Հովիկ Մելիքյանի, Հարություն Մկրտչյանի և Ռուսթ Նովհանյանի:

վել են, ենթարկվել կանխամտածված և շարամիտ ֆալսիֆիկացիայի: Բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը ամեն կերպ փորձել է սքողել Նալբանդյանի ունիոնցիոն, դեմոկրատիզմը և նրան ներկայացնել որպես սոսկ մի լուսավորիչ մտածող, նրա ժառանգությունը խեղաթյուրելով ծառայեցնել նացիոնալիստական պրոպագանդային: Նացիոնալիստական գրչակաները առավել մեծ փութկոտություններով ջանացել են Նալբանդյանին կտրել իր գաղափարական հենարանից՝ 60-ական թվականների ուսական ունիոնցիոն դեմոկրատական շարժումից: Նրանք, այդպիսով, Նալբանդյանի պրակտիկ դործունեությունը աշխատել են անջատել Ռուսաստանի դյուզացիական ունիոնցիոն շարժումից և այն ներկայացնել որպես օտարերկրյա գաղութարարների միջամտության վրա հենված, մեկուսացված հայ ազգայնական շարժման արտահայտություն:

Սույն գիտական հրատարակության կոմենտարներում և ծանոթագրություններում հիմնականում ճիշտ կերպով վերագնահատված են այդ հարցերը:

Հատորներին կցված կոմենտարները, ծանոթագրությունները և անձնանունների բառարանները զգալի օգնություն են ցույց տալիս Նալբանդյանի գրական ժառանգությունը օգտագործողներին՝ պարզաբանելով 19-րդ դարի կեսերի հասարակական-քաղաքական կյանքի հետ կապված շատ հարցեր, որոնց լուսաբանությունը պահանջում է Նալբանդյանի ապրած ժամանակաշրջանի տնտեսական և կուլտուրական կյանքի խոր իմացություն:

Կազմողները խոշոր աշխատանք են կատարել Նալբանդյանի օգտագործած մեջբերումների ճշտման և նրանց աղբյուրների որոշման ուղղությամբ:

Դրական այս կողմերով հանդերձ Մ. Նալբանդյանի երկերի սույն հրատարակությունը լիովին չի բավարարում սովետական գրականագիտության ներկա պահանջներին: Այդ հրատարակությունը ունի թերություններ, որոնց բացահայտումը կօժանդակի ունիոնցիոն-դեմոկրատ մեծ մտածողի երկերի գիտական նոր հրատարակության պատրաստմանը, իսկ այդպիսի հրատարակության կարիքը զգացվում է սուր կերպով:

Այդ նպատակով է, որ մենք ցանկանում ենք ավելի հանդամանորեն կանգ առնել Նալբանդյանի շորս հատորների թերությունների վրա:

Այդ թերությունները կարելի է բաժանել երկու մասի: Մի խումբ թերություններ արդյունք են Նալբանդյանագիտության տվյալ ժամանակի ոչ բարձր մակարդակին, այն բանին, որ այդ տարիներին սովետական գրականագիտության մեջ շատ հարցեր դեռևս չէին ստացել իրենց սպառիչ լուծումը:

Օրինակ՝ Նալբանդյանը իր նշանավոր «Հիշատակարան» աշխատության մեջ որպես գործող անձ, որպես բացասական պերսոնաժ հանդես է բերում Շամիլին, ակնարկելով մոլի ունիոնցիոն հասարակական գործիչ Գ. Այվազովսկուն: «Հիշատակարանի» ծանոթագրությունները գրողը, հետևելով Շամիլի սխալ դնահատմանը, ըստ որի, վերջինս ներկայանում էր որպես լեոնականների ազգային ազատագրական շարժման ղեկավար, չի կարողացել բացատրել, թե ինչու նման մի մարդու Նալբանդյանը դարձրել է բացասական անհրոս և սուր ծաղրի է ենթարկել: Այդ բաժնի կոմենտարներում մենք կարգում ենք.

«Որ այդ անվան տակ նա նկատի է ունեցել Գաբրիել վրդ. Այվազովսկուն, այդ մասին չի կարելի երկբայել... բայց ինչն է արդյոք դրդել Նալբանդյանին ծաղրելու համար Այվազովսկու կրոնափոխությունը՝ լեոնականների անվանի այդ առաջնորդին վերցնել: Ի՞նչ ենք խոսում այն մասին, որ ընդհանրապես ասած՝ այս երկու անունների մեջ համանման ոչինչ չկա»:

Վերջին տարիների ընթացքում սովետական պատմագիտությունը իր վճռական խոսքն ասաց Շամիլի ղեկավարած շարժումների մասին և ասացուցեց, որ Շամիլը գործել է որպես անզլիական իմպերիալիզմի գործակալ և նպատակ է ունեցել ոչ թե լեոնականների համար ապահովել անկախություն, այլ նրանց կտրել ուս ժողովրդից և դարձնել անզլիական իմպերիալիզմի ղոհեր, մինչդեռ բուն լեոնականների, ինչպես ամբողջ կովկասի ու Հյուսիսային կովկասի ժողովուրդների ձգտումն է եղել իրենց բախտը կապել ուս մեծ ժողովրդի հետ:

Ըստ Մ. Բաղիրովի իր «Մյուրիդիդի և Շամիլի շարժման դնահատման հարցի շուրջը» հոդվածում փաստական հարուստ նյութի հիման վրա բացահայտելով մյուրիդիդի ու Շամիլի շարժման ունիոնցիոն էությունը, ցույց է տալիս, թե ինչպես այդ շար-

Ժուլը ըստ էութեան հրահրվում էր անգլիական և թյուրքական զաղութարարների կողմից։ Ինչպիսիք զորում է, որ Շամիլի գործողութիւնների մեջ ժողովրդական ոչինչ չկա, մյուսի կողմի շարժման մեջ ոչինչ չկա առաջադիմական։ Շամիլը հետապնդում էր միանգամայն այլ նպատակներ։ Շամիլը ձգտում էր կովկասը բաժանել Ռուսաստանից, դադարեցնել մեծ թվով ռուսական զորք և դրանով իսկ օգնել Ռուսաստանի ռազմական թշնամիներին, Անգլիային, Ֆրանսիային և Թյուրքիային՝ նրանց համար ստեղծելով բարենպաստ պայմաններ Ղրիմի շրջանում։ Հենց այս կարգի «ծառայութիւններին» համար էր, որ Անգլիան և Թյուրքիան եռանդուն կերպով օգնում էին Շամիլին, այնպես գործոն մասնակցութիւն էին ցուցաբերում նրա «ազգային-ազատագրական շարժման»։

Հնկ. Բաղիրովը քննադատելով այն մարդկանց, որոնք ազավաղելով փաստերը, սպեկուլացիայի են ենթարկել ռուս ռեւոլյուցիոն-դեմոկրատների անունները, թե իբր նրանք Շամիլին համարել են ժողովրդական հերոս, համոզիչ փաստերով ցույց է տալիս, թե ինչպես 60-ական թվականների ռուս ռեւոլյուցիոն-դեմոկրատական մտքի ամենախոշոր ներկայացուցիչներ Ն. Դ. Չերնիշևսկին և Ն. Ա. Գորբուլյուքովը ժխտական դիրք են բռնել Շամիլի դեկավարած շարժման նկատմամբ։

Այս բոլորից հետո արդեն պարզ կարող է դառնալ, թե ինչու Չերնիշևսկու և Գորբուլյուքովի զաղափարական դիմակից Մ. Նալբանդյանը Շամիլին դարձնելով բացասական հերոս, այնքան խստորեն պետք է քննադատեր Գ. Ալվազովսկուն։

Նման ուրիշ թերութիւններ էլ կան գիտական հրատարակութեան շորս հատորներում, սակայն դրանք, ինչպես ասացինք, արդյունք են Նալբանդյանագիտութեան այդ ժամանակի վիճակին, հեշտութեամբ կարող են այժմ ուղղվել։

Գիտական հրատարակութեան այլ կարգի թերութիւններից են.

ա) Հայ հասարակական հոսանքների և նրանց պարբերական օրգանների անբավարար և հաճախ ոչ ճիշտ գնահատումը։

բ) Եվրոպական զաղութարարների դեմ Նալբանդյանի մղած պայքարի անտեսումը՝ կապված Մխիթարյան միաբանութեան գործունեութեան գնահատման հետ։

գ) Մ. Նալբանդյանի համախոհներից մի քանիսի սխալ բնութագրումը։

Մեր կարծիքով Նալբանդյանի երկերի ծանոթագրութիւնների մեջ սխալ է գնահատված Միք. Նալբանդյանի և Ստ. Նազարյանցի համագործակցութիւնը և անհիմն կերպով առաջ է քաշված այն տեսակետը, որ Նազարյանցը մի շարք հարցերում ազդել է Նալբանդյանի վրա։

Թե որքան է դերազնահատված Նազարյանցը այդ հատորների կոմենտարներում, երևում է այն ընդհանուր գնահատումից, որ տրված է Երկերի I, II և III հատորների «Անձնանունների բառարաններում», անշան տարբերութիւններով. ահա այդ գնահատումը — «Նազարյանց Ստեփանոս (1814—1879) հուշակավոր գիտնական, հրապարակախոս, «Հյուսիսսփայլ» ամսագրի խմբագիր... Մեծ է եղել Նազարյանցի դերը Նալբանդյանի հոգևոր կյանքի զարգացման գործում։ Մոսկվայում նրան հանդիպած առաջին հայը, որ իր կրթութեամբ, դիրքով և աշխատանքով աչքի էր ընկնում մուսուլմանական միջավայրում, Նազարյանցն էր։ Նրանց մերձեցման այս առաջին շրջանում և հասկապես հայկական բաժանմունքում վերաբերող հարցերում է ահա, որ անզայման նշանակալից է եղել Նազարյանցի ազդեցութիւնը։ «Հյուսիսսփայլ» շրջանի համատեղ գործունեութեան հայտնի երկամյակը (1858—1859) երևած համեմատաբար բացակայում էր հայկական լուսավորականության բուրժուական թեր, Նալբանդյանը՝ ռեւոլյուցիոն-դեմոկրատական։ Հեռանալով «Հյուսիսսփայլ»-ից, Նալբանդյանը չէր նրան, չկտրվեց նրանից, հարկ համարեց հրապարակով պաշտպան կանգնել «Իրենց թախմի» այդ օրգանին, քանի որ նախորդ էտապում առաջ էր քաշված լուսավորության, լեզվի, կրթական ռեֆորմի և այլ հարցերը դեռևս սպասում էին իրենց լուծմանը» (Մ. Նալբ., Երկեր, հատ. I, էջ 546—547)։ (Հնդգծումները մերն են. — Գ. Սա.)

Այս տողերից իմանում ենք, որ Ստ. Նազարյանցը եղել է 50—60-ական թվականների մի այնպիսի խոշոր գիտնական, որը իր «դիրքով և աշխարհայացքով աչքի էր ընկնում նույնիսկ ռուսական միջավայրում»։ Եվ ահա այդպիսի մի գիտնական բնականաբար խոշոր ազդեցութիւն պիտի ունենար Մ. Նալբանդյանի «հոգևոր կյանքի զար-

¹ „Большевик“, 1950 г. № 13, стр. 31.

համար, որ քրիստոնեական եկեղեցու գովերգումը նրա մոտ պատահական մի քանի նախադասություններով արտահայտված «բարեպաշտ» քրիստոնեի վերաբերմունք չէ: Նրա մոտ կա քրիստոնեական կրոնի մոլեռանդ ջատագովում, այդ կրոնի հմուտ օգտագործում՝ մասուններին քաղաքական պայքարից հեռու պահելու համար:

Նույնիսկ այն օրերին, երբ Մ. Նալբանդյանը իր «Երկու տող» և «Երկրագործութունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունների մեջ ընդհուպ մոտենում էր մատերիալիստական դիրքերին, քննադատում էր ոչ միայն քրիստոնեական, այլ առհասարակ ամեն մի կրոն, «իմաստակութուն և խաբեբայություն» համարելով այն փիլիսոփայությունը, որ «անմիջապես չի բխում մարդկային կյանքից» այն օրերին, երբ Նալբանդյանը գրում էր, որ «Մարդն է փիլիսոփայության և՛ հեղինակը և՛ առարկան»¹: Նաղարյանցի այդ նույն օրերին, դրանից էլ հետո, 1863-64 թվականներին հրատարակած իր «Ազգային մտածությունը» ընդարձակ հոդվածում գրում էր.

«Ինչ որ Նոր կտակարանը աստուծո մասին ուսուցանում է, ոչ թե միայն ճշմարիտ է մի հատ մարդու, այլ բոլոր մարդերի մասին, ոչ թե լոկ մի ժամանակի, այլ բոլոր ժամանակների համար ճշմարիտ, ոչ թե լոկ այս կյանքիս, այլև, հանդերձալ կյանքի համար ճշմարիտ, դա է բոլոր հասակները, ժամանակները, մարդերի համար ճշմարիտ, դա է լացարձակ ճշմարիտ, որովհետև ճշմարիտ է նույնիսկ աստուծո մասին»²:

Ինչ խոսք, որ Մ. Նալբանդյանի ստեղծագործություններից էլ կարելի է բերել տողեր, որոնք վերաբերում են քրիստոնեական կրոնի պաշտպանությանը: Նալբանդյանը ունեցել է աշխարհայացքի ուշադրավ էվոլուցիա, նրա մոտ միանգամից չեն հաղթահարվել հավատքի հետ կապված հարցերը: Խոսքը այդ մասին չէ, այլ այն մասին, թե որն է տիպականը Նաղարյանցի մոտ, որը՝ Նալբանդյանի:

Կարծում ենք, որ կրոնի քննադատման հարցում անիմաստ է դադարարական նույնություն տեսնել Նալբանդյանի և Նաղարյանցի միջև:

Գուցե այդ ազդեցությունը հնարավոր է գտնել դաստիարակության հարցում:

Ամենից առաջ պարզենք, թե ում համար էր պայքարում Նալբանդյանցը, ում՝ Նաղարյանցը: Նալբանդյանը գրում է. «Մեք ադատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու: Մեր անձը և զբիշը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ»³:

Նաղարյանցը, ընդհակառակը, առաջին հերթին մտածում էր հենց «արծաթի թումբերի տակ» անխոցելի մնացած հարուստների մասին: Նրա ուշադրության առարկան գերադանցապես քաղաքային բնակչությունն էր, վաճառականությունը, որի դաստիարակությունը անհրաժեշտ էր համարում եվրոպական կապիտալի հետ մրցելու համար:

Նաղարյանցը եթե պայքարում էր ծխական դպրոցների տգետ քահանա-ուսուցիչների դեմ, ապա դեմ չէր դաստիարակության գործը «զարգացած» հոգևորականներին հանձնելուն: Նրա իդեալն էր մի հոգևորական ակադեմիայի հիմնադրումը հայ իրականության մեջ: Պարտք կա ազգի հոգևոր իշխանի վերա, մի հոգևոր Ակադեմիա ընդհանուր գիտական և աստվածաբանական կրթության հիմնարկել, ուստի կարող էին ժամանակավ արժանավոր սպասավորք և ուսուցիչք աստուծո բանի հառաջանալ ազգի մեջ»⁴:

Ստ. Նաղարյանցի կարծիքով «հայոց քանքարավոր մանուկներին» դաստիարակելու համար նախ պետք էր կրթել ու դաստիարակել նրանց ուսուցիչներ հանդիսացող «եկեղեցական պաշտոնյայքը, տալ նոցա մի բարոյական, կրոնական և աստվածաբանական կրթություն, որի հետ միշտ պիտո է լծակից մնար կրթությունը աշխարհական գիտությունների մեջ»⁵:

Ինչպիսին է Նալբանդյանի դիրքը դաստիարակության հարցում: Նա «Հիշատակաբան»-ում գրում է. «Մեր դրությունը այսպես է. դպրոց հարկավոր է հիմնել, պահպանել այնտեղ, ուր է ազգը»⁶:

1 Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. II, էջ 73:

2 Ստ. Նաղարյանց, Երկեր, հատ. I, էջ 324:

3 Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. III, էջ 23:

4 Ստ. Նաղարյանց, Երկեր, հատ. I, էջ 334:

5 Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. III, էջ 427:

«Ազգ ասելով,—գրում է նա,—պիտի իմանալ հասարակ ժողովուրդը և ոչ նորա միջից, նորա քրտինքով և նորա արյունով հառաջացած մի քանի մեծատուներ»¹։

Նալրանդյանի մյուս պահանջն էր՝ ազգային զպրոցի անկախութիւնը եկեղեցուց, դաստիարակութեան գործի վստահումը աշխարհիկ մարդկանց։ «Ազգային զպրոցը» աշխարհական լուսավորութիւնը չշփոթել կրօնի կամ կրօնավորների հետ, զպրոցի կառավարութիւնը հանձնել ուսումնական աշխարհական անձերի. մերժել հոգևոր վիճակից մարգերի իրավասութիւնը, որեւիցե ազգային աշխարհական զպրոցի վերայից»²։

Նույնպիսի էական տարբերութիւն կա Նալրանդյանի և Նաղարյանցի դադափարների միջև՝ լեզվի հարցում։

Տարօրինակ չէ՝ նաև այն պնդումը, թե Նաղարյանցը Նալրանդյանի վրա ազդել է «հատկապես հայ իրականութեան վերաբերյալ հարցերում»։ Զարմանալի է, որ երկար տարիներ հայ իրականութեան մեջ ապրած, իտալիական-հակախալիքյան պայքարում կոփված Նալրանդյանը «հայ իրականութեան հետ կապված հարցերում» սովորելու էր Նաղարյանցից, որը մոտ 20 տարի հեռու էր եղել հայկական միջավայրից՝ 1832—1840 թվականներին եղել էր Դորպատում, երկու տարի՝ Պետերբուրգում, 6 տարի պաշտոնավարել էր Կադանի համալսարանում, 1849 թվականից փոխադրվել էր Մոսկվա, որտեղ էլ 1853 թվականին ծանոթացել էր Նալրանդյանի հետ։

Մ. Նալրանդյանի Երկերի ծանոթագրութիւնները դրող ընկերները սխալ են մեկնարանում նաև Նալրանդյանի հեռացումը «Հյուսիսսփայլ»-ից, այն բացատրելով ոչ թե սկզբունքային, դադափարական տարակարծութիւններով, այլ պատահական, անսկզբունք տարածայնութիւններով։

«Սերժելով Նալրանդյանի առաջարկը «Հյուսիսսփայլ»-ը Փարիզ փոխադրելու մասին,—կարդում ենք Երկերի III հատորի ծանոթագրութիւններում, ն-ը դրանով էլ ստիպեց Նալրանդյանին հեռանալ «Հյուսիսսփայլ»-ից, որից սակայն նա ամբողջովին չխզեց իր կապերը»։

«Հիշատակարաններ»-ում և նամակներում Նալրանդյանի արտահայտած մի շարք մտքերից երևում է, որ նա այնքան էլ զոհ չի եղել Նաղարյանցի հյուրընկալութիւնից. և զոհ չի եղել ոչ թե այն պատճառով, որ փող չի ստացել,—եթե այդ լինէր պատճառը, հենց սկզբից նա չէր աշխատակցի «Հյուսիսսփայլ»-ին,—այլ զոհ չի եղել խմբագրութիւնում իր հոգվածների նկատմամբ Նաղարյանցի սահմանած ներքին ցենզուրական խստութիւններին։ Նալրանդյանի հոգվածները լույս էին տեսնում այնպիսի կրճատումներով, ուղղումներով, որոնք աղավաղում էին մեծ մտածողի մտքերը, դուրս երբեմն հակառակ տպավորութիւն ստեղծում, իսկ որոշ հոգվածներ, ինչպես Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը՝ մերժվում էին Նաղարյանցի կողմից։

«Հիշատակարան»-ում մի տեղ Նալրանդյանը գրում է «իմ հորեղբայրն իմ զլխին ցենզորի նման մի բան է, շատ խիստ բարոյականութեան տեր մարդ է, ամենայն ուր նա-յում է հիշատակարանիս, որ մի անպատշաճ բան չգրեմ»։

«Նալրանդյանցի և Նաղարյանցի մեջ սրտակից բարեկամութիւն և մտերմական ընտանի հարաբերութիւն երբեք եղած չէ»,—գրում է Ս. Շահազիզը։ «Ժամանակակից ակա-նատեսների ասելով, նոցա անհամաձայնութիւնը և վիճարանութիւնը համարյա միշտ լի-նում էր տպվելիք հոգվածների նյութի և զլխավորապես լեզվի մասին»։ Որ զլխավորը լեզուն չի եղել, երևում է հենց Շահազիզի հաջորդ տողերից. «Նա փոխանակ քերականա-կան ձևերի և ոճերի՝ շատ անգամ ձևոնամուխ էր լինում և ամբողջ պարբերութիւններին, որով, հաճախակի հոգվածագիրների էական միտքն ու իմաստն էր փոխվում, խանգարվում։ Նալրանդյանցը, զոնե իր հոգվածների վերաբերութեամբ միշտ ընդդիմանում էր, ասելով՝ «Մտեփան Իսայիչ, թույլ տվեք, խնդրեմ, որ իմ մտքերը տպագրվին այնպես, ինչպես որ նորա ինքնարեքրարը բխում են»»³։

Մեզ չի հասել «Հյուսիսսփայլ»-ի արխիվը, որպեսզի մենք հնարավորութիւն ունե-նայինք տեսնելու, թե ինչ է կրճատել կամ ավելացրել Նաղարյանցը Նալրանդյանի հոգ-վածներում։ Անտարակուսելի է, սակայն, որ այդպիսի «շտկումներ» եղել են և եթե դրանց

¹ Մ. Նալրանդյան, Երկեր, հ. III, էջ 45։

² Նույն տեղում, հատ. I, էջ 427։

³ Ս. Շահազիզ, Միքայել Ղաղարյան Նալրանդյան, Մոսկվա, 1897, էջ 86—87։

մի մասը թելադրված էր ցենզորական խստութիւններով, ապա մի զգալի մասը հետեանք էր Նաղարայանցի լիբերալ վերաբերմունքին:

Օրինակ, 1858 թ. «Հյուսիսսփայլ»-ի մեջ լույս է տեսել Մ. Նալբանդյանի «Նկատողութիւն» ուշադրով հոգւածը, որ իրավամբ կարելի է ասել «Հիշատակարան»-ից հետո Նալբանդյանի «Հյուսիսսփայլ» շրջանի հրապարակախոսութեան ամենավաղ լույս է ջերից մեկն է, որտեղ հնարավոր է գտնել «Երկրագործութեան» մեջ զարգացված մի շարք հարցերի սաղմնային վիճակը: Ահա այդպիսի մի կարևոր հոգւած վերջանում է հետևյալ տողերով. «Առանց բրիտոնեական կրօնի ուսման անհիմն է ամենայն լուսավորութիւն: Եվ բրիտոնեական կրօնի ուսումը պիտո է բխի Հիսուսի Բրիտոսի աստվածային և կենդանարար ազդեցութից, — Ավետարանից»:

Մենք արդեն ասացինք, որ Նալբանդյանի հոգւածներում էլ կան բրիտոնեական կրօնը պաշտպանող մտքեր, սակայն ընթերցողը հեշտութեամբ կնկատի դրանց և վերահիշյալ տողերի տարբերութիւնը, տողեր, որոնք այնքան որոշակիորեն հիշեցնում են Նաղարայանցի հարյուրավոր սուրբներով հայտնած մտքերը:

Մենք նպատակ չունենք ժխտելու Ստ. Նաղարայանցի դերը 19-րդ դարի 50—60-ական թվականների հայ հասարակական կյանքում: Նա եղել է ճանաչված արևելագետ: Պայքար է մղել հայկական պահպանողականութեան դեմ, հրավիրելով իր վրա ոչ միայն խալիբյանների ու այլադոկսիկների թշնամութիւնը, այլև էջմիածնի: Նա բրիտոնեական սխոլաստիկ դաստիարակութեան հակադրում էր իր ժամանակաշրջանի բուրժուական դաստիարակութիւնը, առաջ էր քաշում դպրոցներում դրական դիտողութիւններին տեղ տալու հարցը: Նա խոշոր դեր է կատարել դրաբարի դեմ մղվող պայքարում, պաշտպանելով աշխարհարարի գերիշխանութիւնը դրաբարի նկատմամբ, զգալի դեր է կատարել ռուսական դրականութեան, կուլտուրայի պրոպագանդայի դործում:

Սրանք երբեք հիմք չեն տալիս պնդելու, որ Նալբանդյանը զաղափարական ազդեցութիւն է կրել Նաղարայանից: Նաղարայանցը և Նալբանդյանցը տարբեր դիրքերում էին կանգնած ոչ միայն ճորտատիրական հարաբերութիւնների վերացման, ինքնակալական կարգերի պահպանման, սոցիալական պայքարի հարցերում, այլև տարբեր դիրքերից էին բարձրացնում լուսավորական հիմնական հարցերը, որոնց արձարծման մեջ որոշակի երևում է մի կողմից լիբերալ Նաղարայանցի սահմանափակութիւնը և երկյուղը մասսաների ակտիվացումից, մյուս կողմից Նալբանդյանի խորը դեմոկրատիզմը: Նալբանդյանի զաղափարական սահմանադատումը Նաղարայանից՝ ամենևին չի փոքրացնում այն ծառայութիւնները, որ կատարել է «Հյուսիսսփայլ»-ը: «Հյուսիսսփայլ»-ը մնում է 19-րդ դարի 50—60-ական թվականների հայ ամենապրոգրեսիվ օրդանը: «Հյուսիսսփայլ»-ի էջերից էր, որ հայ հասարակական կյանքն էր թափանցում ռուսական առաջավոր զաղափարախոսութիւնը: «Հյուսիսսփայլ»-ը նոր մտքեր էր բերում դարերով անշարժութեան մեջ գտնվող հայ իրականութեանը, բերում էր ոչ միայն 60-ական թվականների ռուսական պրոգրեսիվ զաղափարները, այլև ռուսական կլասիկ դրականութեան նմուշները, և այս բոլորը անշուշտ հիմնականում Մ. Նալբանդյանի «Թախրմի» ջոնքերով: Հայ հասարակական կյանքում «Հյուսիսսփայլ»-ի կատարած խոշոր դերն րնդունելով հանդերձ, չպետք է արհեստական կերպով զաղափարական ազդեցութիւնը որոնել Մ. Նալբանդյանի վրա:

Նալբանդյանի երկերի գիտական հրատարակութեան կոմենտարների և ծանոթագրութիւնների մյուս թերութիւնն այն է, որ դրեթի անտեսված է սկզբունքային, տեսական ու համառ այն պայքարը, որ ուղղուցիտ-դեմոկրատ մեծ մտածողը մղել է եվրոպական զաղութարարների և արևմտամտական ռեակցիոն կուլտուրայի դեմ: «Երկրագործութեան» մեջ ոչնչացնող քննադատութեան է ենթարկված եվրոպական պետութիւնների զաղութարարական քաղաքականութիւնը, պետութիւններ, որոնք «քաղաքակրթութիւն» տարածելու քողի տակ ստրկութիւն ու կեղեքում էին բերում արևելքի ժողովուրդներին:

Հայտնի է, թե ինչպիսի անողոր պայքար է կազմակերպել Մ. Նալբանդյանը եվրոպայի ու նրա հայկական արտահայտութիւնը հանդիսացող Միսիթարյան միարանութեան դեմ:

Նալբանդյանն առաջինն էր հայ իրականութեան մեջ, որ փշրեց քարացած ու սխալ կարծիքը Միսիթարյան միարանութեան «խաղաղ» կուլտուրական դործունեութեան մասին, և ցույց տվեց, որ այդ Միարանութիւնը փաստորեն կատարում է Վատիկանի քաղաքական

1 Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. II, էջ 264:

պատվերը և հանդիսանում է նրա դործակալը, աշխատում է հայ ժողովրդին հեռու պահել սոցիալական պայքարից, ջլատել նրա միասնությունը, նրան բաժան-բաժան անելով, աստիճանաբար ասիմիլացիայի ենթարկել:

Նալրանդյանը չէր խարվում Մխիթարյանների պատմա-բանասիրական աշխատանքից¹։ Նրանց ոսկեզօծ հրատարակություններից, այդ բոլորի տակ տեսնում էր նրանց եզրվտական էությունը, համարձակ պատժում էր նրանց «հայ ազգասերի» զիմակը, ջուլջո տալիս ստարացած կաթոլիկի պապական դործակալների դեմքը, այն պապական դործակալների, որոնք «ծնանում են հայկական զիմակով» (Երկեր, հատ. 11, էջ 224):

Նալրանդյանն առաջինն էր, որ ոչ միայն ջուլջո տվեց Մխիթարյանների բանասիրական կրթական աշխատանքի քաղաքական նպատակները, այլև զիտական հմտությամբ առյուցուցեց, որ ամենևին իրականություն չի համապատասխանում այն սխալ, թյուր կարծիքը, թե Մխիթարյանները մեծ ծառայություններ են մատուցել հայ բանասիրությանը՝ իրենց «զիտական» հրատարակություններով: Նա բազմաթիվ փաստերով ջուլջո տվեց, որ Մխիթարյանները հանդիսանում են հայ ժողովրդի պատմության հմուտ և ճարպիկ ֆալսիֆիկատորները, որ նրանք անդամ տեքստերի ազավադումներով հայ ժողովրդի պատմության ամենափայլուն էջերը խեղաթյուրում են, հայերին ներկայացնելով ի վաղուց անտի չոտին հնազանդ ու ենթակա մի ժողովուրդ:

Նալրանդյանի երկերի կոմենտարները զրոգները չեն բացահայտել եզրվտիզմի և բողոքականության դեմ Նալրանդյանի մղած պայքարի քաղաքական խոր բովանդակությունը:

Օրինակ՝ Մխիթարյանների դեմ Նալրանդյանի դրած հոգվածաշարքի, ինչպես և «Հիսուսյանք» հոգվածի կոմենտարների մեջ ասվում է, թե «Թափառական հրեայի» թարգմանությամբ Նալրանդյանի նպատակն էր ոչ միայն զեղարկեստական դրականություն տալ, այլև «ծանոթացնել եզրվտների դործունեության հետ ընդհանրապես», թե Նալրանդյանի նպատակն էր «եզրվտների մարդկության պատմության մեջ խաղացած ծայրահեղ ունակիդոն դերը բացահայտելով՝ ջուլջո տալ կաթոլիկական պրոպագանդայի էությունը, պայքարել Մխիթարյանների ազդեցության դեմ»: Դուրս է գալիս, որ Նալրանդյանին վերացականորեն հետաքրքրել է եզրվտիզմի կողմից մարդկության հասցված չարիքը: Բայց ինչով էր հրատապ այդ պայքարը տվյալ էտպումը: Հայ ժողովրդի առաջ կանգնած ինչ հորդեր էին թելադրում այն, ինչու հատուկ, ծրագրված աշխատանք սկսվեց Նալրանդյանի ղլխավորությամբ ընդդեմ կաթոլիկության ու բողոքականության: Ինչու հայ իրականություն մեջ ստեղծվեց հրապարակախոսական և զեղարկեստական մի ամբողջ գրականություն՝ ընդդեմ եվրոպական զաղութարարների, գրականություն, որի ոգեշնչողն էին 50-60-ական թվականներին Մ. Նալրանդյանը, 70-ական թվականներից Հ. Պարոնյանը և ուրիշները: Սրանց մասին ոչինչ չկա, մինչդեռ այդ բոլորը թելադրված էր եվրոպական պետությունների կողմից հայ ժողովրդին սպառնացող զաղութացումով ու ասիմիլացիայով: Իր «Պոստհայ յուսավորչական համայնքը» զեկուցադրում՝ ուղղված կ. Պոլսի սուսական գեսպանին, Մ. Նալրանդյանը գրում էր «համենայն դեպս, եթե որ հայերը ստիպված լինեն գրկվելու իրենց առաջին կանոնադրությունից, ապա ազդի նշանավոր մասը անցնելու է կաթոլիկության և բողոքականության, որպեսզի անձատվելով յուսավորչական պատրիարքությունից, ազատվի վերը հիշված անձերի ձեռքից (որոնք հակված են կաթոլիկության կողմը) և միամամանակ հարելու նրանց, որոնց հովանավորում են Ֆրանսիան և Անգլիան: Հայ կաթոլիկ հովվապետ Հասունյանը, որը հայտնի է բույդարական դործերում ունեցած իր միջամտությամբ, վաղուց ի վեր գավեր է յարում գավառներում, խոստանալով հայերին ֆրանսիական կառավարության գորեզ հովանավորությունը, նվաղ եռանդով չեն գործում նաև ամերիկյան միսիոնարները: ...Հայ ազգը, վուրկ արհախն ամեն մի պաշտպանությունից, երաւեկված Դոսո կամայակամուքյանը, փոք առ փոք կանցնի (և առգեն անցնում է) մասամբ կաթոլիկությամբ, մասամբ բողոքականությամբ ու գրու հետ մեկտեղ կհաւաքվի և Անգլիայի բաւոյական ազգեցւթյունը Թյուրքիայում: Մինչդեռ Խայերք ամբողջ Թյուրքիայում ճշամադրված է Թ Խոստատանի ոգտից»:

Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի է շեշտակի այն պայքարը, որ մղել են Մ. Նալրանդյանը և նրա ղլխավորությամբ մի խումբ պրոպեգանդի մտածողներ կաթոլիկական և բողոքական պրոպագանդայի դեմ: Մ. Նալրանդյանի զիտական հրատարակության

¹ Մ. Նալրանդյան, Երկեր, հատ. 11, էջ 367:

կոմենտարները զրոգ ընկերները երևույթներն այնպես են ներկայացնում, թե իբր նախնական պատահական առիթներով է զրել կաթոլիկության դեմ: Այսպես, բոտ երկերի 2-րդ հատորի կոմենտարները զրոգ ընկերով՝ Նախնական ձևի սուսանք» հոգվածը գրելու համար առիթ է հանգիստացել Մխիթարյան միաբանության «աշխի ընկնող անդամներին մեկի՝ Բղնատիոս Փափաղյանի բացահայտ համակրական խոսքը եզրիտների մասին»:

Սա շատ նախիվ բացատրություն է, հարցի ոչ ճիշտ բմրոնում: Մխիթարյան միաբանության «աշխի ընկնող անդամներին մեկի» այդ կարծիքը՝ տպված ժողովրդին անհասկանալի դրարարով, երբեք այնպիսի վտանգ չէր, որ Նախնականը դրա համար ափսոսնորով նյութ ուսումնասիրեր և գրեր իր ընդարձակ հոգվածը «Հիսուսյաններին» մասին: Այդ մասին Նախնականի ակնարկը գրական մի պրիում էր: Կար շատ ավելի լուրջ վտանգ, այն, որ Հիսուսյանների հայ աշակերտները, — ինչպես տեսանք Նախնականի խոսքերից, — Անտոն Հասունյանի գլխավորությամբ քայքայիչ աշխատանք էին կատարում հայ իրականության մեջ: Հարյուրավոր պրոպագանդիստներ, եկեղեցական ամբիոններ, մամուլը օգտագործում էին, որպեսզի հայերին ասիմիլացիայի ենթարկեն, դարձնեն Ֆրանսիացիներ: Հայ ժողովրդին ուսական աղղեցությունից հետո պահելու համար, նրանք Կ. Պոլսի պատրիարքության հակադրում էին Էջմիածնի կաթոլիկությունը, ձգտելով թուլացնել Էջմիածնի աղղեցությունը հայերի վրա: Եվ այդ նրանց հաճախ հաջողվում էր:

Անհրաժեշտ էր ժողովրդին ցույց տալ, թե Քրիստոսի անունից ժողովրդին մոտեցող, նրան շողորորթող այդ եզրիտները ովքեր են, ովքեր են նրանց նախաձայրերը, ինչպիսի ոճիրներով թաթախված: Այս էր վտանգը և ոչ Բղնատիոսի համակրանքը եզրիտիվ մի նկատմամբ:

Այժմ տեսնենք, թե նույն տխրահոշակ Բղնատիոսին ինչպես է գնահատել Մ. Նախնականը: Նախնականը մի շարք առիթներով ոչնչացնող քննադատության է ենթարկել Բղնատիոսին, հատկապես նրա «եկեղեցական պատմությունը», որը եզրիտիզմի պրոպագանդան է եկեղեցական պատմության քողի տակ, որտեղ հեղինակը «ամենայն ջանք գործ է դնում հիսուսյանների խավարը լույս ապացուցանել, իսկ հակառակորդների լույսը խավար»¹: Խվում էր, թե Նախնականի երկերի կոմենտարներում պետք է Փափաղյանին տրվեր այնպիսի քաղաքական ընդթաղի, որը հասկանալի դարձնի Նախնականի ժխտողական դիրքը նրա նկատմամբ, մինչդեռ, ահա թե ինչպես է ներկայացվում եզրիտիզմի ջատագովը «Անձնանունների» բառարանում: «Փափաղյան Բղնատիոս (1765—1853) Կ. Պոլսեցի, 1838 թ. Հոռոմում օծվել է Տարոնի եպիսկոպոս: Հեղինակ՝ մի շարք աշխատությունների, որոնցից նշանավոր են «Պատմություն եկեղեցական», «Գործնական երկրաչափություն», «Արվեստ մանրանկարի» և այլն: Իր «Մատանայի պաշտոնական մեծ հանդեսը» երդիծարանական աշխատության մեջ Նախնականը ծագրում է Փ-ի «եկեղեցական պատմությունը»:

Այս բոլորից հետո անհասկանալի է, թե ինչու Նախնականը այդքան «նշանավոր» գրքերի հեղինակին, որի նույնիսկ երբ քահանա օծվելը անհրաժեշտ է եղել իմանալ, ծագրել է «Մատանայի պաշտոնական մեծ հանդեսում»:

Հայտնի է, որ Նախնականը ոչնչացնող քննադատության է ենթարկել նաև ամերիկյան դադութարարներին: Այդ հարցին անդրադարձել է մի շարք առիթներով, հոգվածներում, նամակներում գրել է հատուկ մի հոգված «Նկատողությունք» վերնագրով, որտեղ մերկացնում է ամերիկյան միսիոնարների քայքայիչ աշխատանքը հայ իրականության մեջ, նրանց համարելով միջնադարյան ինկվիզիտորների դադափարախոսության կրողները, ադատության անունից խոսող, բայց ժողովուրդների ադատությունը խող, նրանց խղճի ադատությունը կողոպտող ավազակներ: «Նկատողությունք» հոգվածի ծանոթագրությունների մեջ (Երկեր, 4-րդ հատոր), մի նախադասություն անգամ չկա, թե Նախնականի սույն հոգվածը հասարակական ինչ անհրաժեշտության թելադրանք էր, ինչու Նախնականը այսքան սկզբունքային պայքար էր մղում ամերիկյան դադութարարների դեմ: Հայտնի է, որ ամերիկյան միսիոնարները մոտ 60 տարի լույս են ընծայել հայերեն լեզվով «Ավետարան» շարաթաթերթը, որը հայ ժողովրդի դեմ կատարած իր նողկալի հարձակումների քայքայիչ դերի պատճառով իրավամբ հայ պրոգրեսիվ մտածող-

¹ Մ. Նախնական, Երկեր, հատ. 11, էջ 419:

² Նույն տեղում, հատ. 11, էջ 67:

³ Նույն տեղում, էջ 457:

ների կողմից հորջորջւում էր աղետաբեր և զգալանքով մերժւում էր հայ աշխատավորութեան կողմից: Այդպիսի մի մոլի ոեակցիոն պարբերականի զնահատումը անաթ թե ինչպէս է տրված Նալրանդյանի երկերի գիտական հրատարակութիւնում:

«Ավետարներ» — կրօնական, ուսումնական, բնականական և քաղաքական շաբաթաթերթ (1855—1815): Այս թերթի «Գործակատար» Ձեռնոր և Ռաֆայել Փափաղյանների հետ Նալրանդյանի առնչութիւնը մեզ անհայտ է: Այստեղ ոչինչ չի ասված «Ավետարներ» ուղղութեան մասին: Եթե անհայտ է եղել Նալրանդյանի «կապը» «Ավետարներ» գործակալների հետ, ապա հայտնի պետք է լիներ, որ «Ավետարներ» բողոքականների հրատարակութիւնն էր ունենում մի նպատակ՝ դավանափոխ անել: ջլատել հայ ժողովրդին, նրան ծառայեցնելով ամերիկյան էքսպանսիայի տարածմանը:

Պոլսահայ մի շարք թերթեր նույնպէս սխալ են զնահատված: Այսպէս, մինչդեռ լիբերալ «Մեմուրան» համարվում է պահպանողական, շատ որոշակի պահպանողական ուղղութիւն ունեցող «Արեւելյան դարը», որը կապկորեն կրկնում էր «Երեւակի» տղիտութիւնները և զաղաղած հողվածներ էր գրում Նալրանդյանի ու նրա համախոհների դեմ: III հատորում համարվում է լիբերալ: Նույն պահպանողական ուղղութեան կրողն էր II տ. Փափաղյանի «Ժամանակ» պարբերականը, մինչդեռ երկերի III հատորի կոմենտարներում նրան տրվում է հետեւյալ անորոշ դնահատականը — «Ժամանակ» երկարաթաթերթ, լույս էր տեսնում Կ. Պոլսում, 1863—69 թթ. Ստ. Փափաղյանի խմբագրութեամբ: Եթե կոմենտարներ գրողը ժամանակ չի գտել «Ժամանակ» թերթելու և որոշելու նրա ուղղութիւնը, ապա պետք էր կարգաւ չ. Պարոնյանի «Ազգային ջոջերը», որտեղ մեծ տաղանդով տրված է Ստ. Փափաղյանի պահպանողական հայացքների զնահատականը, պետք էր նկատի ունենալ Մ. Նալրանդյանի զնահատականը, որտեղ «Ժամանակը» համարվում է ոեակցիոն «Երեւակի» ճուտը (տես Երկեր, հատ. III, էջ 157):

Սույն գիտական հրատարակութեան մյուս թերութիւնը Մ. Նալրանդյանի համախոհների բնութագրման մեջ թույլ տրված անորոշութիւնն է: Նալրանդյանի բազմաթիւ ծանոթների, համախոհների մասին տարբեր հատորներում տրվում են տարբեր բացատրութիւններ: Օրինակ՝ բոտ III հատորի կոմենտարներին, չ. Սվաճյանի «Նալրանդյանի գաղափարական բացեկամն է», II. Թաղվորյանը՝ «Նալրանդյանի ամենամեծագուր զիմակիցը», իսկ բոտ II հատորի կոմենտարին՝ Ս. Թաղվորյանը Նալրանդյանի «Համախոհներից» է, իսկ չ. Սվաճյանը՝ «գաղափարակիցներից»: Ինչ խոսք, որ III հատորի զնահատումը ոչ մի քննադատութեան չի գիմանում: II. Թաղվորյանը երբեք էլ չի եղել Նալրանդյանի «ամենամեծագուր զիմակիցը»: Ամենին չցանկանալով նսեմացնել Թաղվորյանի դերը ԹԾ-ական թվականների գեմոկրատական պայքարում, չենք կարող անտես առնել փաստերը: Փաստն այն է, որ Թաղվորյանից ռեուլցիոն բովանդակութեամբ, գրավոր մեզ հասել է այդ միակ նամակը, որը ինչքան էլ խոշոր նշանակութիւն ունենա, չի կարող նրան դարձնել Նալրանդյանի ամենամեծագուր զիմակիցը: Նալրանդյանի մերձագոր զիմակիցը եղել է չ. Սվաճյանը, որի հրատարակած «Մեղվի» հատորները դրա փայլուն վկայութիւններն են: Այդ պարբերականի մասին կա հենց Նալրանդյանի բնութագրումը, թե «Մեղուն» կենդանի ժողովրդի մարուր բերանն է, ազգի ցավերի և ուրախութեան ճամարտապէս հայտարարը: Այս բոլորից հետո տարօրինակ չէ Թաղվորյանին համարել Նալրանդյանի «ամենամեծագուր զիմակիցը»:

Բանն այն է, որ II. Թաղվորյանի հայտնի նամակը լույս աշխարհ գալուց հետո թուրիմացարար որոշ մարդիկ սկսեցին գերադնահատել նրան, առանց մտածելու, որ այդ նամակի Թաղվորյանի կողմից գրվելը պետք է բացատրել կոնսպիրատիւ նկատառումներով: չ. Սվաճյանը Կ. Պոլսում հայտնի դեմք էր, Ձամուճյանը մի քանի առիթներով և՛ պատրիարքարանին և՛ սուլթանական կառավարութեանը տվել էր լրտեսագրեր, փաստորեն նա ճանաչվում էր վտանգավոր մի անձնավորութիւն, և միանգամայն հասկանալի է, որ նա զգուշանար նման մի նամակ ստորագրելուց:

Սենատական հարցաքննութեան ժամանակ, մի քանի անգամ հարցեր են տրվում Նալրանդյանի գաղափարակիցների ու համախոհների մասին: Նալրանդյանը մեծ հմտութեամբ մոլորեցնում է հարցաքննողներին, երկրորդական անմասն ծանոթութիւնների վրա երկարորեն կանգ առնում, իսկ խոսափում է Լոնդոնի Դերքսնի խմբի և Կ. Պոլսի խմբի մասին խոսելուց, Սվաճյանի անունը տալուց: Երբ մի քանի հարցից հետո, հարցաքննողները շատ որոշակի պահանջում են ասել, թե ովքեր են նրա ծանոթները Կ. Պոլսում, Նալրանդյանը լակոնիկ ասում է հետեւյալ նախադասութիւնը. «Ձեռնեմ մշտական հարարերութիւն»

4. Պոլսի հետ, որտեղ իմ ծանոթությունները և գրադրությունները սոսկ գրամական կամ ընտանեկան հարցերի մասին էր: Պատահական չէ նաև, որ Նալբանդյանի գրականից դուրսված 9 լուսանկարների և այցետոմսերի մեջ չկա Հ. Սվաճյանի ոչ նկարը և ոչ էլ այցետոմսը: Միամտություն կլիներ կարծել, թե Նալբանդյանին ավելի հետաքրքրել է Երուսաղեմի միաբաններից ինչ որ վարդապետ, սրի նկարը դնել է նրա մոտ, և չի ցանկացել ունենալ Սվաճյանի այցետոմսը:

Թե Նալբանդյանը որքան բարձր էր գնահատում Սվաճյանի դերը՝ 50—60-ական թվականների դեմոկրատական շարժման ղեկավարման գործում, երևում է նրա բազմաթիվ գրական գնահատումներից: Իր գլուխ-գործոց «Կրիտիկա» աշխատության մեջ, հիշատակելով Պոռչյանի այն տողերը, թե «Սոս և Վարդիթերը» մի տկար պատանու նվաստ երկասիրությունն է», Նալբանդյանը գրում է. «Ո՛հ, երանի թե մեր ամեն պատանիքը այդպես լինեն. այն ժամանակ կոմս էմանվելի և Մեչուխեչյանի չէ. Սվաճյանի-Գ. Կոմս. արտասուքը վաղուց սրբված կլինեին» (Երկեր, հատ. III, էջ 168):

Չորս հատորներում կան բազմաթիվ վրիպակներ, սխալներ, անճիշտ ձևակերպումներ: Չծանրաբեռնելու համար մեր գրախոսությունը, բերենք դրանցից մի քանիսը միայն: Խրիմյան Մկրտչի մասին ասված է. «Նա ղեկավարում էր այսպես կոչված «ապոդոսյան» կուսակցությունը»: Հայտնի է, որ հայ իրականության մեջ այդպիսի կուսակցություն գոյություն չի ունեցել: Ապոդոսյաններ էին կոչվում 50—60-ական թվականներին այն մարդիկ, որոնք դեմ էին Վանի շարադործ Պողոս վարդապետին և պահանջում էին պատժել Պողոսին: Իր ժամանակին պայմանական ձևով գործածված «կուսակցություն» տերմինը չպետք է բառացի հասկանալ և այդպես դրել:

Պարսկական թագավոր Հազկերտի մասին ասված է «պարսից սասանյան տոհմի թագավորներից. Ալեքսանդր Գրեգորյան»: Մոլեռանդ գրադաշտական հատկանիշը ամենևին էլ չի բացահայտում Հազկերտի նվաճողական քաղաքականությունը, որի մասին խոսվում է նույն տեղում: Թագավորների կրոնական ըմբռնությունները չեն պատճառ, որ նրանք հանդես են եկել ադրեսիվ պատերազմներով և առհասարակ դժվար է իմանալ, թե Հազկերտը ավելի մոլեռանդ գրադաշտական է եղել, քան նրա նախորդներն ու հետնորդները:

Զամուռճյանի «Երևակի» մասին ասված է. 1860 թ. «Երևակը» տմադրի պայքար սկսեց Նալբանդյանի դեմ: «Տմարդի» էպիտետը ամենևին էլ տիպական չէ այն հետևողական պայքարի համար, որ մղում էր ռեակցիոն «Երևակը» Նալբանդյանի դեմ: Նալբանդյանը հումանիզմ չէր պահանջի իր քաղաքական հակառակորդից:

III-րդ հատորի 470-րդ էջում կարդում ենք. ա) դեմոկրատներ, որոնք համախմբված էին Հ. Սվաճյանի «Մեղվի» և Փանոսյանի «Մյունատի»-ի շուրջը և արտահայտում էին «Թեմալյան դեմոկրատիայի» արմատական շահերը: Եթե այս աղավաղում չէ, ապա կոպիտ սխալ է, «Մեղուն» երբեք չի հանդիսացել «Թեմալյան դեմոկրատիայի» արտահայտիչը, ըստ երևույթին պետք է լինի «Թեմալյան»:

Գիտական հրատարակությունում կան նաև փաստական սխալներ: «Երկու տողի» կոմենտարներում ասված է. «Այնուհետև «Երկու տողը» ամբողջությամբ լույս է տեսել 1903 թ. Նալբանդյանի երկերի երկրորդ հատորում: Սխալ է: Նալբանդյանի երկերի Ռոստովյան հրատարակության Բ. հատորը, որտեղ գետնից է «Երկու տողը», լույս է տեսել ոչ թե 1903 թվականին, այլ՝ 1906 թ.:

Երկերի Ա հատորում «Օշական» բանաստեղծության ծանոթագրության մեջ կարդում ենք. «Հավանորեն գրված է 1861 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, Օշականում կամ էջմիածնում» (Երկեր, հատ. II, էջ 506): Սխալ է. Նալբանդյանը 1861 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ոչ թե էջմիածնում էր կամ Օշականում, այլ՝ Հնդկաստանում: Նա կալկաթայից դուրս է եկել 1861 թ. սեպտ. 27-ին, հոկտեմբերի 29-ին հասել է Աղեքսանդրիա (տես ծոցատետրի նկատագրությունները, 4-րդ հատ., էջ 173):

Նալբանդյանի վաղ շրջանի բանաստեղծություններից մեկն է «Նվեր Ամիրյանին» ոտանավորը, նվիրված իր ուսանողական շրջանի ընկերներից Ամիրյանին: Նալբանդյանի չափածո ամբողջ ստեղծագործության մեջ այս բանաստեղծությունը միակն է, որ գրված է ակրոստիկոսով: Չնայած այն բանին, որ այդ բանաստեղծության ձևագիրը արտագրություն է պահպանված է Նալբանդյանի արխիվում, Երկերի I հատորի տեքստը պատրաստողները ուղղորդություն չեն դարձրել այդ փաստի վրա և 10-րդ տան չիւսած բառը դարձնելով հյուսած, խախտել են ակրոստիկոսի սկզբունքը:

Չորս հատորների տպագրության պրոցեսը տևելով մոտ մեկ տասնամյակ, հրատարակիչները հնարավորություն չեն ունեցել հետևողականություն պահպանելու ծրագրված աշխատանքում: Նախատեսված հատորների թիվը 5-ի փոխարեն, որի մասին խոսվում է 1-ին հատորում, զարձեղ է չորս: Հրատարակախոսական որոշ գործեր, որոնք համաձայն I հատորին կցված առաջարանի, պետք է տեղ բռնեն 11 հատորում, բնկել են IV հատորի վերջում (ինչպես «Նկատողություններ»): Սրանք տեխնիկական կարգի թերություններ են, որոնք, ճիշտ է, անհարկ են որևէ գիտական հրատարակության համար, սակայն, չեն փաստում Նալբանդյանի զրական ժառանգության ուսումնասիրմանը:

Այնպիսի անհանգուրժելի է այն անփութությունը, որ հանդես են բերել տեքստերը ապագրության համար պատրաստողները, անփութություն, որի պատճառով բազմաթիվ ազավագումներ են կատարել Նալբանդյանի անդամ այնպիսի նշանավոր երկերում, ինչպես «Երկու տողում», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքում և այլ ստեղծագործություններում:

Մեր ասածը ապացուցելու համար բերենք «Երկու տողում» կատարված ազավագումները: Ընդամենը 23 էջից բաղկացած այս տեքստում սպրդել է մեծ և փոքր 14 անճշտություն և տարրերություն 1861 թ. հրատարակության տեքստից, չնայած տեքստը պատրաստողները ասում են «ներկա հրատարակությունը կատարվում է 1861 թ. փարիզյան հրատարակության հիման վրա» (3-րդ հատ., էջ 149):

Երևում ենք այդ շեղումներից մի քանիսը.

1861 թ. հրատարակության մեջ սպված է	Երկերի III հատորում սպված է
էջ 6. Տես «Երևակ», թ. 87 $\frac{1860}{1861}$ 1 օգոստոսի 1 հունվարի	էջ 15. Տես «Երևակ» թիվ 87 $\frac{1861}{1860}$ 1 հունվարի 1 օգոստոսի
էջ 7. սլ. Այվաճյանին մեր շնորհակալությունը հայտնելով	էջ 16. պ. Այվաճյանին մեր շնորհակալությունը հայտնելով
էջ 9. Սկզբունքների համար մեզ տրված սոցիալիստ. կարմիր հասարակական.	էջ 17 Սկզբունքների համար մեզ տրված սոցիալիստ, կարմիր հասարակական...
էջ 11. «հետո ամուսնացնել նորան յուր մանուկ փոքրավորի հետ, հետո ստիպելով սուսանային կնոջ բողբոջելու»...	էջ 18 «հետո ամուսնացնել նորան յուր փոքրավորի հետ, ստիպելով առհանգել կնոջ բողբոջելու»:
էջ 12. Ինկվիզիցիոնական	էջ 18. Ինկվիզիցիոնական
էջ 14. Ապաստանաւուն	էջ 20.— ապաստաւուն
էջ 39. «Տեսցուք եթէ Վ. Հ. Սարգիս արասցէ...»	«Տեսցուք եթէ Վ. Հ. Սարգիս ասացէ...»:
էջ 43. «Միթաթարություն մեծ է ինձ դի...»	էջ 34 «Միթաթարություն մեծ է դի...» և այլն:

Նալբանդյանի երկերի սույն գիտական հրատարակության տեքստը լեզվական մի շարք ազավագումներով ամենին հանձնարարելի չէ բանասիրական աշխատանքի համար: Բազմաթիվ բառերի, ռեբրի ազավագումը զգալիապես մեծ է հատկապես Նալբանդյանի լեզուն ուսումնասիրողների գործը: Այդ տեսակետից բնորոշ են «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ սպրդած վրիպակները:

1862 թ. հրատարակությունում տպված է	Երկերի III-րդ հատորում տպված է
էջ 12. տեսնենք	էջ 45. տեսնինք
էջ 15. բնակողներ	էջ 47. բնակվողներ
էջ 27. Պարոն չափի ճանչցիր	էջ 53. պարոն չափի ճանաչիր
էջ 30. Այն քսանը պիտի գնա նույն ճանապարհը	էջ 55. այն քսանը պիտի գնա նույն ճանապարհով
էջ 31. Այս բոլորը սարսափալից տեսավ	էջ 55. Այս բոլորը սարսափեցավ տեսավ
էջ 37. ամենուրեք	էջ 58. Ամենաուրեք

Ի դեպ, V հատորի մասին խոսվում է ոչ միայն I հատորի առաջարանում, այլև որպես ազգային մատնանշվում է այդ հատորի ծանոթագրությունների մեջ, որտեղ կարգում ենք «Երկու Մյուլի «Թափառական հրեայի» Նալբանդյանի կատարած թարգմանության մասին ավելի հանգամանորեն տես V-րդ հատորը (1-ին հատ., էջ 533), մինչդեռ այդպիսի հատոր գոյություն չունի:

էջ 56. ...Դրամի զինք մի օրվա մեջ այն-
քան անգամ փոխվում է

էջ 59. Բայց նորա սիրտը սլաղում է և
այն աշխարհից

էջ 61. Դառնալ յուր նախկին կացությունը

էջ 68. Եթե հայ շինականի ձեռքը մի
փոքր դրամ անցան

էջ 91. Ֆրիդրիխ մեծի առաջարկությամբ
լեհաստանը հռչակվեցավ

էջ 110. Քանզի Սուր արծաթ չմտավ նոր
ընդհանրության մեջ, այլ մինից ան-
ցավ դեպի մյուսը:

էջ 67. Դրամի զինք մի օրվա մեջ այնքան
փոխվում է

էջ 69. Բայց նորա սիրտը սլաղում է այն աշ-
խարհից

էջ 70. Դառնալ յուր նախկին կացությանը

էջ 74. Եթե հայ շինականի ձեռքը մի փոքր
դրամ անցան:

էջ 88. Ֆրիդրիխ մեծի առաջարկությամբ Լե-
հաստանը հռչակվեցավ...

էջ 95. Քանզի Սուր արծաթ չմտավ ընդհան-
րության մեջ, այլ մինից անցավ դեպի
մյուսը... և այլն

Հայտնի է, որ «Երկրագործությունը որպէս ուղիղ ճանապարհ» աշխատությունը լույս է տեսել Սիմեոն Մանիկյան անունով: Այդ րանը արտահայտվել է ե՛րբ մի շապկի վրա և՛ տիտղոսաթերթի և՛ առաջին էջում հետևյալ նախադասությամբ: «Երկրագործությունը որպէս ուղիղ ճանապարհ» աշխատասիրեց Սիմեոն Մանիկյան: «Աշխատասիրեց Սիմեոն Մանիկյանը», չգիտենք ինչ սկզբունքով հրատարակողները առհասարակ դուրս են թողել: Միայն «Երկու խոսքի» տակ կա Սիմեոն Մանիկյան ստորագրությունը, որ ի հարկե, անբավարար է, որովհետև կարող էր և «Երկու խոսք» ուրիշի գրչին պատկանել:

Տեքստային վրիպումներ և շեղումներ կան նաև մյուս գործերում: Մենք դրանց վրա կանգ չենք առնում, չծանրաբեռնելու համար մեր դրախոսությունը:

Ի դեպ՝ Մ. Նալբանդյանի երկերի՝ մեր քննադատության ենթակա չորս հատորնե-
րից IV հատորը կազմված և խմբագրված է անհամեմատ ավելի մեծ խնամքով, զիտական
բարեխղճությամբ:

Մենք չենք խոսում Նալբանդյանի երկերի հրատարակության տեխնիկական բնույթի
թերությունների մասին, որոնց մի մասը արդյունք են հրատարակչության անփութ-
ության:

Այսպիսով, Մ. Նալբանդյանի երկերի զիտական հրատարակության սույն չորս հատոր-
ները, զիտելով որպէս մի օգտակար նախափորձ մեծ ուղղութիւն-դեմոկրատի երկերի ի մի
հավաքման և հրատարակության ուղղությամբ, Հայկական ՍՍԻԻԻ-ի Մ. Արեղյանի անվան
Դրականության ինստիտուտը պետք է ձեռնարկի մեծ մտածողի երկերի լիակատար ժողովու-
ծուի հրատարակության գործին այն հաշվով, որ Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի
օրերին՝ 1954 թ., սովետական ընթերցողին հանձնվի այդ զիտական հրատարակության գեթ
առաջին հատորը:

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ